Արձանագրություն N 4

ՀԾԿՀ-26/2-ԷԱՃԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 հունվարի 2026թ.

ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հայկանուշ Սաֆարյանը, անդամներ՝ Նունե Գաբրիելյանը, Արտյոմ Ղազարյանը և քարտուղար՝ Սիլվա Հարությունյանը:

Օրակարգ

ՀԾԿՀ-26/2-ԷԱՃԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

ՀԾԿՀ-26/2-ԷԱՃԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հայկանուշ Սաֆարյանը նիստը հայտարարեց բացված և արձանագրեց որ ՄՈՆԻԹՈՐ ՍԵՔՅՈՒԹԻԹԻ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում https://eauction.armeps.am/ համակարգ չի ներբեռնել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը, ինչպես նաև պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ չի մուտքագրել որակավորման և պայմանագրի ապահովումները, և դրանք ներկայացնելու մասին գրությունը:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության պահանջների համաձայն անհրաժեշտ է՝ ՄՈՆԻԹՈՐ ՍԵՔՅՈՒԹԻԹԻ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Հայկանուշ Սաֆարյան
անդամներ	_____	Նունե Գաբրիելյան
	_____	Արտյոմ Ղազարյան
քարտուղար	_____	Սիլվա Հարությունյան